

ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՄԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ PEPPERDINE ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Չորեքշաբթի, Մարտ 3, 2010ին Առաջնորդարան այցելեցին Մալիպու քաղաքի Pepperdine Համալսարանի ղեկավարներին՝ Տեսուչ՝ Darryl Tippens եւ Փրոֆեսոր Levon Gougasian.

Մայիս 12-15ի օրերուն, Համալսարանը կազմակերպած է միայն Քրիստոնէական կրօնական-պաշտամունքային - Ծիսական սրբազան երգերու նուիրուած ձեռնարկ մը (միայն մեներգ եւ խմբերգ= A cappella, այսինքն՝ առանց նուագարաններու ընկերակցութեան երգեցողութիւն):

Համալսարանի ներկայացուցիչները հանդիպումի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հօր յատուկ դիմում-խնդրանք ներկայացուցին՝ մասնակցելու Pepperdineի նման կրօնական նկարագիր ունեցող որակաւոր այս ծրագիրին:

Սրբազան Հայրը սիրով ընդառաջեց ներկայացուած խնդրանքին եւ ծրագիրին: Որոշուեցաւ Հինգշաբթի, Մայիս 13ին, Արեւմտեան Թեմի եկեղեցականներով ու Սարկաւագներով մասնակցիլ այս ծրագիրին՝ ներկայացնելով Հայ Առաքելական Եկեղեցւոյ Երեկոյեան Ժամերգութիւնը թէ՛ իբր պաշտամունք (worship) եւ թէ՛ ալ իբր սրբազան երգեցողութիւն (Sacred music):

Համալսարանի այս ծրագիրին իրենց մասնակցութիւնը կը բերեն քրիստոնէայ տարբեր յարանուանութիւններ: